«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Դարձվածքների ուսուցումը տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Նինա Հրաչի Գևորգյան

ՄԱՐԶ Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Սիամանթոյի անվան հ. 162 հիմն. դպրոց,ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. Ի՞նչ է դարձվածքը 5

1.1 Դարձվածքների տեսակները 5

1.2 Դարձվածքների ծագումը 8

Գլուխ 2. Դարձվածքների գործածությունը 10

2.1 Բանավոր խոսք 10

2.2 Գրավոր խոսք 11

2.3 Դարձվածքներ և բառակապակցություն 11

Գլուխ 3. Դարձվածքների խոսքային տեսակները 13

Եզրակացություն 15

Օգտագործված գրականություն 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿ Խոսքի գեղեցկության համար կարևոր նշանակություն ունեն դարձվածքները, որոնք նպաստում են խոսքի մաքրությանը, նրա հարստությանն ու պատկերավորությանը: Հնամյա մեր հայոց լեզուն ունի հարուստ բառագանձ, բառարմատներ ու բառաձևեր, բազմազան բառակապակցություններ, որոնք հնարավորություն են ստեղծում պատկերավոր դարձնելու ցանկացած երևույթ, իրադարձություն, հասարակական հարաբերություններ:

Ուսուցիչներիս խնդիրն է աշակերտներին սովորեցնել դարձվածքները կիրառելու կարողունակություններ՝ իրենց խոսքը հարստացնելու, համեմելու, գեղեցկացնելու համար: Դարձվածքների կիրառումը խոսքում օգնում է լիովին խոսակցին փոխանցել մեր հույզերն ու ապրումները: Դպրոցում դարձվածքների ուսուցումը նպատակ ունի հարստացնելու աշակերտների բառապաշարը՝ ծանոթացնելով դարձվածքների առաջացման պատմությանը, ժողովրդական բանահյուսությանը, ավանդույթներին, առասպելներին: Մենք ուսուցիչներս սովորողներին դեռևս տարրական դասարանից պետք է բացատրենք, որ դարձվածքները ժողովրդական մտածողության արդյունք են ու ներթափանցելով խոսակցական և գրական լեզվի մեջ, հարստացրել և պատկերավոր են դարձրել խոսքը:

Դարձվածքների առաջացման հիմքում ընկած է մարդու կենսափորձը, աշխարհայացքը, բնության երևույթների ճանաչումն ու կենդանիների վարքագծին տեղյակ լինելը: Օրինակ՝ մարդն իր փորձով համոզվել է, որ կործանել, ինչ- որ մի բան ոչնչացնել, նշանակում է հողին հավասարեցնել: Կամ ինչ- որ մի բան բացահայտել, պարզել, այսինքն՝ ջրի երես դուրս գալ: Դարձվածքները խոսքի մեջ առաջացել են անհատների կողմից, ժամանակի ընթացքում ընդհանրացվել են՝ դառնալով ընդհանուրի սեփականությունը:

Թեմայի ընտրությամբ հետապնդել ենք հետևյալ նպատակները.

1. Ներկայացնել հայերենի դարձվածքների խմբերը
2. Բացահայտել դարձվածքների խոսքային արժեքը:
3. Ներկայացնել դարձվածքի ուսուցման դերն ու նշանակությունը որպես բառապաշարի հարստացման միջոց:

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Դարձվածքները գալիս են դարերի խորքերից և փոխանցվում սերնդեսերունդ: Հետևաբար կարևորում ենք դարձվածքների ուսուցումը տարրական դասարաններում, որն այժմ էլ խիստ արդիական է: Աշխատանքը բաղկացած է Ներածությունից, երեք գլուխներից և վերջնարդյունքից:

ԳԼՈՒԽ 1. Ի՞ՆՉ Է ԴԱՐՁՎԱԾՔԸ

Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որը խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր: Ժամանակակից հայերենում դարձվածքը հաճախ անվանում են դարձվածաբանական միավոր, դարձվածաբանական արտահայտություն: Դարձվածաբանության ավելի լայն ըմբռնման կողմնակիցները դարձվածքների մեջ ներգրավում են առածները, ասացվածքները, աֆորիզմները, թևավոր խոսքերը, հարադրությունները, բարդ հարադրական շաղկապները, բառակապակցական տերմինները:

ԳԼՈՒԽ 1.1 ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայերենում դարձվածքները բաժանվում են չորս խմբի՝ դարձվածքային սերտաճում, դարձվածքային միասնություն, դարձվածքային կապակցություն և դարձվածքային արտահայտություն:

Դարձվածքային սերտաճում. Այս խմբի դարձվածքների ընդհանուր իմաստը չի բխում դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից: Դրանք իմաստային տեսակետից անբաժանելի փոխկապակցություններ են: Նրանցում բառերը ամբողջապես կորցնում են իրենց բառային իմաստները և տվյալ կառուցվածքում վերաիմաստավորվում են և դառնում դարձվածքի ընդհանուր, ամբողջական իմաստի բաղադրատարր, օրինակ՝ *աչքը բացել* – 1. զարթնել, սթափվել, 2. ծնվել: Առյուծ կտրել- արիանալ, սրտոտել:

Դարձվածքային միասնություն. Դարձվածքների այս խմբի մեջ մտնում են դարձվածաբանական այնպիսի միավորներ, որոնք դարձվածքային սերտաճումների նման իմաստաբանորեն անբաժան են և ամբողջական, բայց ի տարբերություն նախորդների, սրանց դարձվածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին, փոխաբերական իմաստով: Դարձվածքների այս կարգին առաջին հերթին բնորոշ է պատկերավոր իմաստը: Օրինակ՝ *բերանը ծռել - խնդրել, աղաչել:*

Դարձվածքային կապակցություն. Դարձվածքային կապակցություններ են կոչվում դարձվածքային այն միավորները, որոնց ընդհանուր իմաստը ամբողջովին բխում է նրանց բաղադրիչ-բառերի իմաստներից: Դրանք այնպիսի դարձվածքներ են, որոնց կազմի մեջ մտնող բառերն ունեն ինչպես ազատ, այնպես էլ դարձվածաբանորեն կապված գործածություն: Այդ կարգի դարձվածքներում բաղադրիչները՝ դարձվածքը կազմող բառերը, հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, բայց իրենց կապերով մնում են կախյալ վիճակում: Օրինակ՝ Խելքը թռցնել- խելագարվել, սուր ճոճել- սպառնալ:

Դարձվածքային արտահայտություն. Դարձվածքային արտահայտություն են համարում այն կայուն դարձվածաբանական միավորները, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն անբաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից. դարձվածքի ընդհանուր իմաստը կախված է և բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստից, դարձվածքի բառային կազմը և դարձվածքային իմաստը կայուն են: Օրինակ՝ լինել թե չլինել, ծառերի հետևում անտառը չտեսնել, կենդանի դիակ: Դարձվածքային արտահայտությունների թվին են դասվում.

1. Գրական ծագում ունեցող թևավոր խոսքերը, հեղինակային դիպուկ արտահայտութունները, ինչպես, օրինակ՝ ավգյան ախոռ, դամոկլյան սուր, Քաջ Նազար, Դոն Քիշոտ:
2. Ժողովրդական խոսակցական անեծքները, մաղթանքները, օրհնանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փո խաբ ե ր ակ ան ___ի մ աս տ ստանալով՝ վեր են ածվել դարձվածքների. ինչպես՝ մի բարձի ծերանաք, հողեմ գլուխդ, գետինը մտնես:
3. Առածա-ասացվածքային արտահայտությունները, որոնք վեր են ածվել դարձվածքների. ինչպես՝ գայլի գլխին ավետարան կարդալ, երկաթը տաք-տաք ծեծել, ճտերը աշնանը հաշվել:

   (Սուքիասյան Ա.Մ, Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն). Եր. համալս. հրատ., Երևան, 1989):

Հաճախ երկու կամ ավելի բառեր փոխաբերական իմաստով են գործածվում, այսինքն՝բառը հանդես չի գալիս իր ուղիղ իմասով, այլ ունենում է թաքնված իմաստ: Այսպես՝

Բարի պտուղ – անարժան, անպետք

Աչքից ընկնել – նկատելի դառնալ, երևալ, նշանավոր լինել

Կես բերան – Ձևի համար, կիսաբերան

Էշի ականջին քնած- անտեղյակ, առօրյա անցուդարձից կտրված

(Վ. Ա. Սահակյան, Վ. Մ. Սահակյան, Հոմանիշների, հականիշների, դարձվածքների, ուղղագրական, բացատրական բառագիրք, Երևան, 2003թ.):

ԳԼՈՒԽ 1.2 ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՃԱԳՈՒՄԸ

Դարձվածքների մի մասը ստեղծել է ժողովուրդը: Շատ դարձվածքներ էլ հանդիպում ենք գրական ստեղծագործություններում: Օրինակ՝ «Հայի բախտ», «Քաջ Նազարի բախտ», «Մոր բախտ, աղջկա թախտ» և այլն: Բազմաթիվ դարձվածքների հանդիպում ենք «Սասունցի Դավիթ» `էպոսում:

Այսպես՝

Անահ սիրտը ներս սողաց մի ցավ - սկսեց վախենալ

Քո ձենը հասավ Աստծո գահին - Աստված լսեց նրան

Քաշեց թրի տակ - բոլորին իրեն ենթարկեց

Ամենքի քեֆի հետևից թռչեմ -բոլորի խոսքը կատարեմ

Վարդ աղջիկներ- գեղեցիկ աղջիկներ

Դառը դատած դեղին ոսկի - ծանր աշխատանքով ստեղծած

Լեղին ջուր կտրեց – վախեցավ

Հիշենք նաև Պարույր Սևակի «Մարդ կա ելել է շալակն աշխարհի, մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում» նշանավոր բանաստեղծությունը, որտեղ բանաստեղծը նկատի ունի աշխատասեր, մյուս կողմից եսասեր, իր շահերն հետապնդող մարդուն:



Այսպիսով, ուսուցչի օգնությամբ երեխաները ոչ միայն ծանոթանում են գրական ստեղծագործություններին, այլև ձեռք են բերում գրքով աշխատելու, գրքերից օգտվելու հմտություններ և կարողունակություններ, ինչն էլ մեծացնում է հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

ԳԼՈՒԽ 2. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Դարձվածքները գործածում ենք բանավոր և գրավոր խոսքում: Դարձվածքները խոսքը դարձնում են տպավորիչ և արտահայտիչ, օգնում են մտքերը ճիշտ արտահայտել: Օրինակ՝ զարմացա, ապշեցի, այսինքն՝ բերանս բաց մնաց, վախեցա, այսինքն՝ լեղիս ջուր կտրեց:

ԳԼՈՒԽ 2.1 ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ

Բանավոր խոսքն ի տարբերություն գրավոր խոսքի, ավելի մեծ հնարավորություն է տալիս արտահայտելու մարդկային հույզերը, ապրումները, զգացմունքներն ու տրամադրությունները, լսողի ականջին խոսքը դառնում է ավելի հաճելի: Դրան գումարվում է խոսողի դեմքի արտահայտությունը, ձայնի փոփոխական ելևէջները: Այս դեպքում խոսողի և լսողի միջև կապը ավելի սերտ է լինում: Երեխան իր ուսուցչին, որը կարդում է հեքիաթը պատկերավոր, դերասանական ոճով, ձայնի ճիշտ արտահայտմամբ, լսում է մեծ հիացմունքով ու հետաքրքրությամբ, անհամբեր սպասելով դեպքերի ընթացքին ու ավարտին: Սա բանավոր խոսքի հիմնական առավելություններից մեկն է:

ԳԼՈՒԽ 2.2 ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԸ

Գրավոր խոսքը պարզապես, միջնորդված խոսակցություն է գրողի և ընթերցողի միջև առանց ձայնի և դեմքի փոփոխության: Սակայն պետք է նկատել, որ գրավոր խոսքը լինում է ավելի մշակված, հագեցված հարուստ բառապաշարով, հնարավորություն ունի ճիշտ կիրառել լեզվական ձևերը: Մի խոսքով, գրավոր խոսքը շատ ավելի բարձր է, քան բանավոր խոսքը, քանի որ խոսողը կարող է թույլ բազմաթիվ քերականական, շարահյուսական և այլ լեզվական սխալներ:

Դարձվածքները խոսքը ոճավորելու հրաշալի միջոցներ են, «խոսքի աղն ու համեմունքը» և դրսևորվում են բոլոր տեսակի ոճերում: Առանձնապես մեծ է դարձվածքի դերը գեղարվեստական գրականության մեջ: Դարձվածքների միջոցով հաճախ խոսքն ազատվում է չորությունից ու երկարաբանությունից:

Դարձվածքներն իրենց իմաստային նրբերանգներով մտքին տալիս են դիպուկություն ու կենդանություն՝ այլաբանորեն ներկայացնելով ասելիքը: Փոխաբերությունը դարձվածքի էական հատկանիշն է. այն ներհատուկ է ցանկացած դարձվածքի: Խոսքի մեջ դարձվածքները հարաբերակցվում են ինչպես բառերին (անվանողական), այնպես էլ նախադասություններին (հաղորդակցական):

ԳԼՈՒԽ 2.3 ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ և ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դարձվածքները կայուն և ամբողջական բառակապակցություններ են: Դարձվածքները նաև լեզվի պատկերավորման միջոցներ են, խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզական երանգավորում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը: Այսպիսով, դարձվածքների կարևոր հատկանիշներից է փոխաբերական-այլաբանական իմաստը: Այլ կերպ ասած՝ դարձվածքը փոխաբերական-այլաբանական միասնական իմաստ ունեցող կայուն, բառային անբաժանելի, պատրաստի վերարտադրելի կապակցություն է:

Ի տարբերություն դարձվածքների բառակապակցությունները կազմված են առանձին բառերից, որոնք ազատ են ու կարող են փոփոխվել, օրինակ՝ երկինքը կարող է լինել կապույտ, ամպոտ, խոտը կարող է լինել ոչ միայն կանաչ, այլև չոր և թաց, դեղին և այլ: Իսկ դարձվածքները արտահայտում են մեկ իմաստ, օրինակ՝ գլուխ բերել, բախտը բերել, այսինքն՝ հաջողություն ունենալ:

Ուսուցիչը երեխաների բառապաշարը հարստացնելու նպատակով կատարում է խմբային, քարտերով աշխատանք: Քարտերի վրա կարող են լինել գոյականներ, ածականներ, բայեր և այլն՝ հանձնարարելով կազմել բառակապակցություններ և դարձվածքներ:

Բառեր	Բառակապակցություն	Բառեր	Դարձվածքներ
Ականջ	Մեծ ականջ	Ականջ	Ականջ դնել
Աչք	Կապույտ աչք	Աչք	Աչքը ծակ
Կարճ	Կարճ պարան	Կարճ	Կարճ կապել
Գալ	Մոտ գալ	Գալ	Մուսան գալ
Տալ	Խորհուրդ տալ	Տալ	Սիրտ տալ, հոգի տալ
Գին	Ապրանքի գինը	Գին	Ջրի գին
Սուր	Սուր դանակ	Սուր	Սուր անկյուն

Այսպիսով, երեխաները ոչ միայն ձեռք են բերում գիտելիքներ, այլև զարգացնում են ինքնուրույն մտածողություն և խմբերում աշխատելու կարողունակություն:

ԳԼՈՒԽ 3. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԽՈՍՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ուսուցիչը սովորողներին հաղորդում է տարբեր գիտելիքներ, մատուցում է լրացուցիչ տեղեկություններ, որպեսզի կարողանա ճիշտ բացատրել դարձվածքի իմաստն ու կիրառական նշանակությունը: Այսպիսով, ուսուցիչը ընդլայնելով աշակերտների մտահորիզոնը, զարգացնում է նրանց հետաքրքրասիրությունն ու սերը ընթերցանության և գրքի նկատմամբ: Դեռ տարրական դասարանից ուսուցիչը սովորողներին ծանոթացնում է հայկական և հունական դիցաբանությանը: Այսպես, օրինակ՝ աքիլլեսյան գարշապար, դամոկլյան սուր, դանայան տակառ, սիզիփոսյան աշխատանք, բրաբիոն ծաղիկ, ծիրանի ծով, Հարդագողի ճանապարհ, Վահագն Վիշապաքաղ և այլն: Ուսուցիչը ներկայացնում է դրանց նախապատմությունը՝ հարստացնելով նրանց գիտելիքները առասպելաբանությունից՝ բացատրելով, որ կան դարձվածքներ, որոնք լեզվի մեջ են թափանցել տարբեր գրական ստեղծագործություններից, ինչպես՝ Անբան Հուռի, մեծապատիվ մուրացկաններ, տեր Թոդիկի դպրոց, վերջին մոհիկան, լինել, թե չլինել, կոտրած տաշտակի առաջ կանգնել և այլն: Ուսուցիչն ոչ միայն համառոտ անդրադառնում է այդ ստեղծագործությունների բովանդակությանը, այլև միաժամանակ իր խոսքով խթանում է նրանց ընթերցասիրությունը:

Մայրենի 2-րդ դասարանի դասագրքում ներկայացված է «Երեք աղջիկների հեքիաթը»: Տեքստը հնարամտության, խելքի ճկունության և վերջիններիս շնորհիվ հաջողության հասնելու մասին է: Այստեղ հանդիպում ենք «Բերանը ջուր առնել նստել» դարձվածքին, որը նշանակում է լուռ ու մունջ նստել, ոչ մի բան չասել, չխոսել: Սովորողները, քանի որ ծանոթ են դարձվածք հասկացությանը, ուստի կնկատեն որ այս արտահայտությունը ուղիղ իմաստով գործածված չէ:

Այսպիսով, ուսուցիչը պետք է հարստացնի աշակերտների բառապաշարը, նրանց մեջ ձևավորի դարձվածքները ճիշտ ու դիպուկ կիրառելու կարողություն: Աշակերտները պետք է սովորեն, որ իրենց ասելիքը ներկայացնելու համար կարևոր է ոչ թե բառերի քանակը, այլ բառի, արտահայտության տեղին, դիպուկ գործածությունը, և հենց այստեղ էլ օգնության են գալիս դարձվածքները՝ որպես ասելիքի պատկերավոր ներկայացման բաղադրիչներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ներկայացնելով դարձվածքները իրենց կազմությամբ, գործածությամբ, խոսքային տեսակներով կարևորում ենք նրանց դերն ու նշանակությունը գրական խոսքում և առօրյա կյանքում: Հետազոտական աշխատանքը կատարելիս եկել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Դարձվածքները գալիս են դարերի խորքերից և փոխանցվում սերնդեսերունդ: Հետևաբար կարևորում ենք դարձվածքների ուսուցումը տարրական դասարաններում, որն այժմ էլ խիստ արդիական է, որովհետև զարգացնում է խոսքը և հարստացնում բառապաշարը:
2. Ծանոթացնելով աշակերտներին հայ և օտար մշակութային արժեքներին, նրանք ձեռք են բերում տարբեր տեղեկություններ և գիտելիքներ, ընդլայնում իրենց մտահորիզոնը, խթանում սերն ու հետաքրքրասիրությունը ընթերցասիրության նկատմամբ և զարգացնում գրքով աշխատելու ունակություններ:
3. Քարտային աշխատանքների միջոցով սովորողները, սկսած տարրական դասարաններից, ձեռք են բերում ոչ միայն ինքնուրույն, այլև համագործակցային եղանակով աշխատելու հմտություններ:
4. Սովորողները զարգացնում են իրենց բանավոր և գրավոր խոսքը՝ կիրառելով նրանցում գեղեցիկ, հետաքրքիր, գունեղ, հյութեղ արտահայտություններ և դարձվածքներ:
5. Դարձվածքներով խոսում է ժողովորդը իր կենսափորձի և իմաստության շնորհիվ: Այն կիրառվում գեղարվեստական գրականության մեջ:
6. Այսպիսով, ուսուցիչը պետք է հարստացնի աշակերտների բառապաշարը, նրանց մեջ ձևավորի դարձվածքները ճիշտ ու դիպուկ կիրառելու կարողություն:
7. Աշակերտները պետք է սովորեն, որ իրենց ասելիքը ներկայացնելու համար կարևոր է ոչ թե բառերի քանակը, այլ բառի, արտահայտության տեղին, դիպուկ

գործածությունը, և հենց այստեղ էլ օգնության են գալիս դարձվածքները՝ որպես ասելիքի պատկերավոր ներկայացման բաղադրիչներ:

8. Այսպիսով, ուսուցիչը պետք է հարստացնի աշակերտների բառապաշարը, նրանց մեջ ձևավորի դարձվածքները ճիշտ ու դիպուկ կիրառելու կարողություն: Աշակերտները պետք է սովորեն, որ իրենց ասելիքը ներկայացնելու համար կարևոր է ոչ թե բառերի քանակը, այլ բառի, արտահայտության տեղին, դիպուկ գործածությունը, և հենց այստեղ էլ օգնության են գալիս դարձվածքները՝ որպես ասելիքի պատկերավոր ներկայացման բաղադրիչներ:
9. Դարձվածքների ուսուցման առանցքային կետերից մեկն էլ դրանց ուսուցման ճիշտ և համապատասխան մեթոդների ընտրությունն է: Դասի հաջողված լինելը գլխավորապես պայմանավորված է ուսուցման ճիշտ մեթոդի ընտրությունից, որը

   ենթադրում է մեթոդի կիրառման համապատասխանություն դասանյութին և դասարանի պահանջներին:
10. Թեմայի շրջանակում կարևոր է նաև ամրապնդող և ստուգիչ առաջադրանքների կատարումը: Սրանք կարող են երբեմն գնահատողական բնույթ չկրել:
11. Կարելի է այս առաջադրանքներից կազմել քարտեր և կատարել խմբային աշխատանքներ, որն առավելապես հետաքրքրություն կմտցնի թեմայի ուսումնասիրման գործընթացի մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սուքիասյան Ա.Մ, Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն). Եր. համալս. հրատ., Երևան, 1989
2. Վ. Ա. Սահակյան, Վ.Վ. Սահակյան, Դպրոցական բառարան: Հոմանիշների,հականիշների,դարձվածքների ուղղագրական բացատրական բառգիրք, Երևան, 2003
3. Հովհաննես Թումանյան, Սասունցի Դավիթը կամ Սասնա ծռերը, Երևան,2012
4. Գ. Արծրունի /Գ. Պ. Սահակյան /,Դիցարան Հայոց, Հանրագիտարանային բառարան,Երևան, 2003
5. Պետրոս Բեդիրյան, Բառերի խորհրդավոր աշխարհից, Երևան, 1985
6. Վաչագան Սարգսյան, Սուսաննա Գրիգորյան, Կարինե Թորոսյան, Հեղինե Խաչատրյան, Մայրենի 2, Երևան, 2010
7. https://www.youtube.com/watch?v=gWFeufkZpM4&ab_channel=e-schoolArmenia
8. https://www.youtube.com/watch?v=VXbw13apiEs&ab_channel=NarineHekekyan
9. https://www.youtube.com/watch?v=bD3zSm0tWJM&ab_channel=%D4%B1%D6%80%D6%83%D5%AB%D5%B6%D5%A5%D4%B1%D5%B6%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6